ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱՏ-ԳՀԱՊՁԲ-05/19

ք. Երևան «28» դեկտեմբերի 2019թ.

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամը, ի դեմս Հիմնադրամի տնօրեն Վ. Տեր-Ղևոնդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընտել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **59 820 000 (հիսունինը միլիոն ութ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային

օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ

և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Մատենադարան» ՄեսրոպՄաշտոցի Անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամ	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
ՀՎՀՀ 01503576	ՀՀ 2500010488760100
ՀԷԲ Մյասնիկյանմ/ճ	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 163038100547	ՀՎՀՀ 01254973
Տնօրեն_____	**Տնօրեն**_____
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Վ. Տեր-Ղևոնդյան Կ.Տ	**Կ.Հարությունյան** Կ.Տ

Հավելված N 1
«28» դեկտեմբերի 2019 թ. կնքված
N ՄԱՏ-ԳՀԱՊՁԲ-05/19 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
Հ/հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողի անվանումը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը*	Հ/մ	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը
1	30216110/1	սկաներներ համակարգիչների համար, ZEUTSCHEL WE DIGITIZE YOUR WORLD	Zeutschel GmbH, Գերմանիա	Համաձայն Հավելված 1.1-ի	հատ	24900000	24900000	1	ք.Երևան, Մաշտոցի 53	1	29.02.2020թ.
2	30216110/2	սկաներներ համակարգիչների համար ZEUTSCHEL WE DIGITIZE YOUR WORLD	Zeutschel GmbH, Գերմանիա	Համաձայն Հավելված 1.1-ի	հատ	34920000	34920000	1	ք.Երևան, Մաշտոցի 53	1	29.02.2020թ

Ապրանքի մանրամասն տեխնիկական բնութագրի նկարագրությունը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված 1.1-ում:

ԳՆՈՐԴ

«Մատենադարան» ՄեսրոպՄաշտոցի Անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
ՀԷԲ Մյասնիկյանմ/ճ
Հ/Հ 163038100547
Տնօրեն_____
(ստորագրություն)
Վ. Տեր-Ղևոնդյան
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
ՀՀ 2500010488760100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01254973
Տնօրեն_____
(ստորագրություն)
Կ.Հարությունյան
Կ.Տ

Հավելված N 1.1
«28» դեկտեմբերի 2019 թ. կնքված
N ՄԱՏ-ԳՀԱՊՁԲ-05/19 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

№ №	Անունը, բնութագրիչները (կազմաձևերը)		
	Բնութագրիչներ	**Չափման միավոր**	
1.	**ZEUTSCHEL OS 12002 CA A2 + ֆորմատի սքաներ ճնշման ապակիով**		
1.1	Սքանավորվող բնօրինակի առավելագույն չափը (երկարություն * լայնություն)	մմ	622*460
1.2	Սքաների օպտիկական խտությունը	ppi	600
1.3	Սքաների ելքային խտությունը՝ կարգավորելի	ppi	(100 - 600)
1.4	Առավելագույն չափի բնօրինակի սքանավորման արագությունը բոլոր գունային ռեժիմներում ՝400 ppi խտությամբ	վրկ	3,8
1.5	Գույնի խորությունը առնվազն 42 բիթ (գունավոր), ելքային՝ առնվազն 24 բիթ / 14 բիթ մոխրագույն / ելքայինը առնվազն 8 բիթ, 1 սև-սպիտակ / ելքային առնվազն 1 բիտ		առկա
1.6	Սքանավորման համակարգի ֆոկուսի նվազագույն խորությունը	մմ	50
1.7	Վերջնական ֆայլերի ձևաչափերը. Tiff առանց սեղմման, PDF, TIFF G4, JPEG, JP2, BMP, PCS, բազմաէջ PDF, TIFF: Մեկ կամ մի քանի ելքային ձևաչափերի փոխակերպում, XML ձևաչափի փոխակերպան առկայություն		առկա
1.8	Սքաները պետք է աշխատի ICC գունային պրոֆիլների հետ: Համակարգը պետք է ապահովի պատկերների փոխակերպումը այլ ICC այլ պրոֆիլների (օրինակ ՝ AdobeRGB1998 փոխարկելու հնարավորություն):		առկա
1.9	Սքաներին միացված սարքերի՝ ICC գունային պրոֆիլները ինտեգրելու հնարավորություն (տպիչ, լրացուցիչ մոնիտոր և այլն)		առկա
	Լուսավորության համակարգ և սքաների սքանավորման համակարգ		
1.10	Սքաները պետք է հագեցած լինի բնօրինակը լուսավորելու LED լամպերի համակարգով (լույսի հավասարաչափ բաշխման եւ էներգիա խնայելու համար) առանց ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթման:		առկա
1.11	Լուսավորության համակարգը և սքաների սքանավորման համակարգը պետք է միավորված լինեն մեկ, առանց լրացուցիչ արտաքին կառուցվածքային տարրերի և ակտիվացվեն միայն սքանավորման պահին, որպեսզի խուսափելու համար լույսի հոսքի անհարկի ազդեցությունից բնօրինակի վրա:		առկա
1.12	Լուսավորությունը պետք է իրականացվի մեկ աղբյուրից ՝ առանց ռելիեֆային օբյեկտների վրա կրկնակի ստվերների ձևավորման:		առկա
1.13	Սքաների օպտիկական համակարգը պետք է հագեցած լինի գծային տիպային CCD ունեցող սենսորով (խուսափելու համար մասշտաբի և «կարման» խնդիրներից (երկու կամ ավելի տեսախցիկներից ստացված ծրագրաշարային սոսնձման պատկերներ), ինչպես նաև, խուսափելու համար Bayer-ի էֆեկտից և պատկերի որակի կորստից գունային տեղեկատվության փոխպատվաստման ընթացքում) յուրաքանչյուր սքանավորման ընթացքում սպիտակի հաշվեկշիռի և պայծառության ավտոմատ կարգավորմամբ, ինչպես նաև չպետք է ունենա կափարիչ՝ լրացուցիչ սպառվող նյութերը բացառելու և ծառայության ժամկետը բարձրացնելու համար:		առկա

1.14	Սքաների օպտիկական համակարգը պետք է հագեցած լինի լրացուցիչ մատրիցային սենսորով կամ լուսավորության հատուկ համակարգով, որը թույլ է տալիս սքանավորել բնօրինակի մակերևույթով ռելիեֆը և խմբագրել օպտիկական աղավաղումները՝ հիմնված ավտոմատ ռեժիմով եռաչափ մոդելի կառուցման վրա:		առկա
1.15	Սքաները պետք է հագեցած լինի լուսավորության համակարգով և ավտոմատ լուսային կառավարմամբ:		առկա
1.16	Խցիկի օպտիկական առանցքը և լուսային ճառագայթի առանցքը պետք է կապված լինեն փայլերը բացառելու համար:		առկա
1.17	Պետք է բացառվի երկու խաչաձևվող հանդիպակաց ճառագայթների լուսավորությունը:		առկա
1.18	Սքաները պետք է սքանավորում իրականացնի բոլոր ռեժիմներո մեկ անցումով և միայն մեկ սքանավորող տարրի միջոցով:		առկա
	ՍՔԱՆԵՐԻ ԳՐՔԱՅԻՆ ՀԱՐՄԱՐՎՈՂ ՕՐՈՑՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ		առկա
1.19	Բնօրինակի հաստության, կողի լայնության և բնօրինակի չափսերի համար ամրակայված կարգավորման առկայություն:		առկա
1.20	Օրոցքի աջ և ձախ մասերը տարբեր հորիզոնական մակարդակներով դիրքավորելու հնարավորություն		առկա
1.21	Սքաների օրոցքի բացման անկյունը	աստիճանն երով	180
1.22	Սքանավորվող բնօրինակի առավելագույն քաշը	կգ	10
1.23	Բնօրինակը կարող է ֆիքսվել ճնշման ապակու միջոցով		առկա
	ՃՆՇՄԱՆ ԱՊԱԿԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏՔ Է ԲԱՎԱՐԱՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ		
1.24	Ճնշման ապակին պետք է ավտոմատացված լինի, իջեցման, բարձրացման գործառույթները պետք է իրականացվեն ինքնաբերաբար՝ սեղմելով սքաների վահանակի մեխանիկական կառավարման կոճակը կամ ոտնակը:		առկա
1.25	Ճնշման ապակու բարձրացման և իջեցման գործառույթները պետք է իրականացվեն նաև երկու ոտնակով (բարձրացման / իջեցման)		առկա
1.26	«Շարունակական սքանավորման» ռեժիմի առկայություն, որի դեպքում ճնշման ապակու բարձրացման և իջեցման գործառույթները պետք է իրականացվեն ինքնաբերաբար, որոշակի ժամանակահատվածից հետո՝ արտադրողականությունը բարձրացնելու և օպերատորի վրա բեռը նվազեցնելու համար:		առկա
1.27	ճնշման ապակու բացման անկյան կարգավորման հնարավորություն		առկա
1.28	Բնօրինակի վրա ճնշման կարգավորման հնարավորություն		առկա
1.29	Բնօրինակի վրա ճնշման սահմանափակման սենսորային առկայություն՝ ճնշման սահմանափակում ոչ ավելի, քան 3 կգ բնօրինակի ամբողջ մակերեսի վրա (ճնշման ապակու օգտագործման ժամանակ)		առկա
1.30	Սքանավորվող բնօրինակի առավելագույն հաստությունը	մմ	100 (սեղմող ապակու օգտագործ-ման դեպքում) / 150 (առանց ապակու օգտագործ-ման)
1.31	Սքաները հնարավորություն է տալիս սքանավորել ծավալային առարկաները 20 մմ բարձրությամբ	մմ	20
1.32	Սքանավորված փաստաթղթերը ուղղակիորեն USB ուղարկելու գործառույթի առկայություն		առկա

1.33	Սքաների կառավարման վահանակը չպետք է սենսորային տիպի տարրեր պարունակի՝ շահագործման հուսալիությունը բարձրացնելու, ինչպես նաև՝ սենսորային տարրերի վնասվելու դեպքում վերահսկողության կորուստից խուսափելու համար:		առկա
	ՍՔԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՀՍԿՎԻ ՀԵՏևՅԱԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ.		
1.34	Սքաների բազային ծրագրային փաթեթի միջոցով		առկա
1.35	Սքաների վահանակի վրա մեխանիկական կառավարման կոճակների միջոցով		առկա
1.36	Գրքի օրոցքի կառավարման ոտնակների և (կամ) ճնշման ապակու միջոցով		առկա
1.37	Սքանավորման ոտնակների միջոցով		առկա
1.38	Ավտոմատ ռեժիմով. սքանավորումն սկսվում է ապակին փակելիս, իսկ սքանավորման ավարտից հետո ապակին ավտոմատ բացվում է:		առկա
	ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՌՈՒՍԻՖԻԿԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՒ ՍՔԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ		
1.39	Գրքի կողի ծալվածքների և պատկերների եռաչափ մշակում, սքանավորված փաստաթղթի եռաչափ մոդելի ստեղծում և բնօրինակ պատկերի հարթեցում ՝ ստացված եռաչափ մոդելի հիման վրա.		առկա
1.40	Օպերատորի մատնահետքերի և օպտիկական աղբի ավտոմատ հեռացում, ֆոնի վերացում		առկա
1.41	Սքանավորված բնօրինակի չափսերի ավտոմատ ամրագրում		առկա
1.42	Պատկերի մշակման եռաչափ համակարգ		առկա
1.43	Էջերի ավտոմատ ճանաչում		առկա
1.44	Դարձերեսի ավտոմատ բաժանում երկու էջի		առկա
1.45	Էջերի ոչ ավտոմատ ընտրություն և առանձնացում		առկա
1.46	Պատկերի շրջում պահանջվող չափով		առկա
1.47	Խտության փոփոխության հնարավորություն		առկա
1.48	Պատկերների պահպանում միաժամանակ մի քանի ձևաչափով		առկա
1.49	Պատկերների փոխակերպում գունավորից՝ մոխրագույնի և սև-սպիտակի		առկա
1.50	Տպագրելու հնարավորություն		առկա
1.51	Ֆայլերի անունների ազատ կազմաձևում, ներառյալ առնվազն հինգ նիշ ունեցող ավտոմատ հաշվիչ, ներառյալ մետատվյալների օգտագործումը		առկա
1.52	Էջակալումը վերահսկելու հնարավորություն՝ բաց թողնված էջերի մասին տեղեկացնելու համար		առկա
1.53	Սքանավորման ընթացքում մետատվյալներ ստեղծելու հնարավորություն (ինչպես կառուցվածքային, այնպես էլ մատենագիտական)		առկա
1.54	Տվյալների արտածման միաժամանակյա հնարավորություն տարբեր ձևաչափերով և խտությամբ		առկա
1.55	Սքանավորված պատկերը առանձին պատուհանում կամ առանձին մոնիտորում ներկայացնելու ունակություն՝ տեսողական որակի վերահսկման համար		առկա
1.56	Պատկերի մշակման ծրագրի լիցենզիայի ժամկետը՝ անժամկետ		առկա
1.57	Սքաների էներգիասպառում	W	350
	Սքաների մուտքային / ելքային խրոցները		
1.58	USB		առկա
1.59	Gigabit Ethernet.		առկա
	ՍՔԱՆԵՐԻՆ ՈՒՂԵԿՑՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԵՆ.		
1.60	Տեխնիկական անձնագիր ռուսերեն		առկա
1.61	Սքաների օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն՝ թղթի և օպտիկական		առկա

	կրիչների վրա:		
	ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՔՄԱՆ ՓԱԹԵԹԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ.		
1.62	Սքաներ		առկա
1.63	Նախապես տեղադրված ծրագրաշարեր օգտվողի ձեռնարկ (ռուսերեն)		առկա
1.64	CD-ներ՝ նախապես տեղադրված բոլոր ծրագրաշարերի ընթացիկ տարբերակներով		առկա
1.65	**Համակարգիչ** **Used Components:** Dell Precision Tower 5820, 950W Chassis, Intel Xeon W-2123 3.6GHz, 3.9GHz Turbo, 4C, 8.25M Cache, HT, (120W) DDR4-266, 16 GB (2x8GB) 2666MHz DDR4 RDIMM ECC, 2x 1TB 3.5inch Serial ATA (7,200 Rpm) Hard Drive, RAID 0, NVIDIA Quadra P600, 2GB, 4 mDP (5820T), Windows 10 Pro (64Bit) Englisch (MultiLanguageInterface) **1 հատ**		
1.66	**Մոնիտոր** Dell UltraSharp 32 Ultra HD 4K Monitor with PremierColor - UP3216Q **1 հատ**		
1.67	**UPS** APC 950VA BX950UI **1 հատ**		
2.	**ZEUTSCHEL OS 12002V A2+ ֆորմատի v-ձեվ գրքային օրոցքով եվ սեղմող ապակիով սքաներ**		
2.1	Սքանավորվող բնօրինակի առավելագույն չափը (Երկարություն * լայնություն)	մմ	600*450
2.2	Սքաների օպտիկական խտությունը	ppi	600
2.3	Սքաների ելքային խտությունը՝ կարգավորելի	ppi	(100 - 600)
2.4	Առավելագույն չափի բնօրինակի սքանավորման արագությունը բոլոր գունային ռեժիմներում՝400 ppi խտությամբ	վրկ	3,8
2.5	Գույնի խորությունը առնվազն 42 բիթ (գունավոր), ելքային՝ առնվազն 24 բիթ / 14 բիթ մոխրագույն / ելքայինը առնվազն 8 բիթ, 1 սև-սպիտակ / ելքային առնվազն 1 բիտ		առկա
2.6	Սքանավորման համակարգի ֆոկուսի նվազագույն խորությունը	մմ	50
2.7	Վերջնական ֆայլերի ձևաչափերը. Tiff առանց սեղմման, PDF, TIFF G4, JPEG, JP2, BMP, PCS, բազմաէջ PDF, TIFF: Մեկ կամ մի քանի ելքային ձևաչափերի փոխակերպում, XML ձևաչափի փոխակերպան առկայություն		առկա
2.8	Սքաները պետք է աշխատի ICC գունային պրոֆիլների հետ: Համակարգը պետք է ապահովի պատկերների փոխակերպումը ICC այլ պրոֆիլների (օրինակ ՝ AdobeRGB1998 փոխարկելու հնարավորություն):		առկա
2.9	Սքաներին միացված սարքերի՝ ICC գունային պրոֆիլները ինտեգրելու հնարավորություն (տպիչ, լրացուցիչ մոնիտոր և այլն)		առկա
	ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ՍՔԱՆԵՐԻ ՍՔԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ		
2.10	Սքաները պետք է հագեցած լինի բնօրինակը լուսավորելու LED լամպերի համակարգով (լույսի հավասարաչափ բաշխման եւ էներգիա խնայելու համար) առանց ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթման:		առկա
2.11	Լուսավորության համակարգը և սքաների սքանավորման համակարգը պետք է միավորված լինեն մեկ կորպուսում, առանց լրացուցիչ արտաքին կառուցվածքային տարրերի և ակտիվացվեն միայն սքանավորման պահին՝ խուսափելու համար լույսի հոսքի անհարկի ազդեցությունից բնօրինակի վրա:		առկա
2.12	Լուսավորությունը պետք է իրականացվի մեկ աղբյուրից ՝ առանց ռելիեֆային օբյեկտների վրա կրկնակի ստվերների ձևավորման:		առկա
2.13	Սքաների օպտիկական համակարգը պետք է հագեցած լինի գծային տիպի CCD ունեցող սենսորով (խուսափելու համար մասշտաբի և «կարման» խնդիրներից (երկու կամ ավելի տեսախցիկներից		առկա

	ստացված ծրագրաշարային սոսնձման պատկերներ), ինչպես նաև, խուսափելու համար Bayer-ի էֆեկտից և պատկերի որակի կորստից գունային տեղեկատվության փոխպատվաստման ընթացքում) յուրաքանչյուր սքանավորման ընթացքում սպիտակի հաշվեկշիռի և պայծառության ավտոմատ կարգավորմամբ, ինչպես նաև չպետք է ունենա կափարիչ՝ լրացուցիչ սպառվող նյութերը բացառելու և ծառայության ժամկետը բարձրացնելու համար:		
2.14	Սքաների օպտիկական համակարգը պետք է հագեցած լինի լրացուցիչ մատրիցային սենսորով կամ լուսավորության հատուկ համակարգով, որը թույլ է տալիս սքանավորել բնօրինակի մակերևույթը և խմբագրել օպտիկական աղավաղումները՝ հիմնված ավտոմատ ռեժիմով եռաչափ մոդելի կառուցման վրա:		առկա
2.15	Սքաների լուսավորության համակարգով պետք է լուսային հոսքերի ավտոմատ կառավարում ունենա:		առկա
2.16	Խցիկի օպտիկական առանցքը և լուսային ճառագայթի առանցքը պետք է կապված լինեն՝ փայլերը բացառելու համար:		առկա
2.17	Պետք է բացառվի երկու խաչաձևվող հանդիպակաց ճառագայթներով լուսավորությունը:		առկա
2.18	Սքաները պետք է սքանավորում իրականացնի բոլոր ռեժիմներում մեկ անցումով և միայն մեկ սքանավորող տարրի միջոցով:		առկա
	ՍՔԱՆԵՐԻ ԳՐՔԱՅԻՆ ՇԱՐԺՎՈՂ ՕՐՈՑՔԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ		
2.19	Սքաները ինտեգրված գործարկման գծային սենսորով էրգոնոմիկ օրոցք պետք է ունենա յուրաքանչյուր կեսի համար:		առկա
2.20	Օրոցքը պետք է ֆիքսված բացման անկյուն ունենա, որը թույլ կտա սքանավորել հին եւ մաշված բնօրինակները:	աստիճան	90
2.21	Գրքային օրոցքը պետք է կարողանա շարժիչով բարձրանալ և իջնել, որպեսզի նրբորեն սեղմի բնօրինակը ապակուն և նրբորեն հեռացնի էջերը ապակուց՝ էլեկտրաստատիկ կպչունությունից խուսափելու համար		առկա
2.22	Նախքան ապակին բացելը, էջերը զգուշորեն առանձնացնելու և բնօրինակը չվնասելու համար, օրոցքը պետք է իջնի կարգավորելի հեռավորության վրա:		առկա
2.23	Օրոցքը պետք է ունենա անհատական կարգավորման հնարավորություն. - օրոցքի կեսերը հեռացնելով և մոտեցնելով ընտրված դիրքում ամրացնելու հնարավորություն. - օրոցքի յուրաքանչյուր կեսի մակերեսի մեծացում՝ ներկառուցված շարժական մասերի միջոցով. - ողջ օրոցքի հորիզոնական տեղաշարժում և ամրակայում գրքի ծալվածքի լավագույն սքանավորման համար		առկա
2.24	Սքաները սքանավորման յուրաքանչյուր կեսի համար պետք է սքանավորման լրացուցիչ կոճակներ ունենա:		առկա
2.25	Օրոցքի վրա ապակու ճնշումը պետք է կարգավորելի լինի թե օրոցքի միջոցով և թե ծրագրային փաթեթի միջոցով:		առնվազն 5 քայլով
2.26	Սեղմող ճնշումը պետք է վերահսկելի լինի սենսորների կողմից օրոցքի յուրաքանչյուր կեսի վրա՝ բնօրինակի վրա ճնշումը անհատապես վերահսկելու համար:		առկա
2.27	Բնօրինակի լավագույն դիրքի և միջին կետի ցուցիչի առկայություն		առկա
2.28	Սքանվորվող բնօրինակի առավելագույն քաշը	կգ	10
2.29	Սքաները պետք է հագեցած լինի V-ձև սեղմիչ ապակիով, որի բացման անկյունը 90 աստիճանի է՝ առանց հատելու (մետաղական կամ այլ նյութեր)		առկա

2.30	V-ձև սեղմող ապակին անկյունի հատման կետում պետք է ունենա կլորացված մետաղական հիմք, որը կանխում է ապակու սուր եզրերով բնօրինակը վնասելու հնարավորությունը և ապակին վնասելու հնարավորությունը բնօրինակի կոշտ մասերի հետ շփվելիս:		առկա
2.31	V-ձև սեղմող ապակին պետք է ունենա ներկառուցված բռնակ՝ ձեռքով աշխատեցնելու համար:		առկա
2.32	Ճնշման ապակին (առանց գործիքների օգտագործման) արագ հանելու և տեղադրելու հնարավորություն՝ առանց ապակու սքանավորում իրականացնելու համար:		առկա
2.33	Ապակու ճնշումը պետք է կարգավորելի լինի ցանկացած տեսակի բնօրինակների հետ աշխատելիս:		առկա
	ՃՆՇՄԱՆ ԱՊԱԿՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ.		
2.34	Ճնշման ապակին պետք է ավտոմատացված լինի, իջեցման, բարձրացման գործառույթները պետք է իրականացվեն ինքնաբերաբար՝ սեղմելով սքաների վահանակի մեխանիկական կառավարման կոճակը կամ ոտնակը:		առկա
2.35	Ճնշման ապակու բարձրացման և իջեցման գործառույթները պետք է իրականացվեն նաև երկու ոտնակով (բարձրացման / իջեցման):		առկա
2.36	«Շարունակական սքանավորման» ռեժիմի առկայություն, որի դեպքում ճնշման ապակու բարձրացման և իջեցման գործառույթները պետք է իրականացվեն ինքնաբերաբար, որոշակի ժամանակահատվածից հետո՝ արտադրողականությունը բարձրացնելու և օպերատորի վրա բեռը նվազեցնելու համար:		առկա
2.37	Ճնշող ապակին օգտագործելիս անհրաժեշտ է նախատեսել կարգավորման հետևյալ հնարավորությունները - ապակու բացման անկյունը. - օրոցքի իջեցման բարձրությունը ճնշման ապակու համեմատությամբ		առկա
2.38	Ճնշման ապակու օգտագործման դեպքում պետք է հնարավոր լինի կարգավորել ճնշումը բնօրինակի վրա:		առկա
2.39	Բնօրինակի վրա ճնշման սահմանափակման սենսորային առկայություն՝ճնշման սահմանափակում ոչ ավելի, քան 3 կգ բնօրինակի ամբողջ մակերեսի վրա (ճնշման ապակու օգտագործման ժամանակ)		առկա
2.40	Սքանավորվող բնօրինակի առավելագույն հաստությունը	մմ	15 (սեղմող ապակու օգտագործ-ման դեպքում) / 20 (առանց ապակու օգտագործ-ման)
2.41	Սքաները հնարավորություն է տալիս սքանավորել ծավալային առարկաները 20 մմ բարձրությամբ	մմ	20
2.42	Սքանավորված փաստաթղթերը ուղղակիորեն USB ուղարկելու գործառույթի առկայություն		առկա
2.43	Սքաների կառավարման վահանակը չպետք է սենսորային տիպի տարրեր պարունակի՝ շահագործման հուսալիությունը բարձրացնելու, ինչպես նաև՝ սենսորային տարրերի վնասվելու դեպքում վերահսկողության կորուստից խուսափելու համար:		առկա
2.44	Առնվազն 21 դյույմ անկյունագծով մոնիտորի առկայություն նախադիտման և պատկերների մշակումը վերահսկելու համար		առկա
	ՍՔԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՊԵՏՔ Է ՎԵՐԱՀՍԿՎԻ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ.		
2.45	Սքաների բազային ծրագրային փաթեթի միջոցով		առկա

2.46	Սքաների վահանակի վրա մեխանիկական կառավարման կոճակների միջոցով		առկա
2.47	Գրքի օրոցքի կառավարման ոտնակների և (կամ) ճնշման ապակու միջոցով		առկա
2.48	Սքանավորման ոտնակների միջոցով		առկա
2.48	Ավտոմատ ռեժիմով. սքանավորումը սկսվում է ապակին փակելիս, իսկ սքանավորման ավարտից հետո ապակին ավտոմատ բացվում է:		առկա
	ՍՔԱՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ		
2.49	Ծրագրավորվող ստեղնաշար, որը ավտոմատացնում է կառավարող ծրագրային փաթեթի գործառույթները:		առկա
2.50	Ծրագրային փաթեթ սքանավորման և պատկերի մշակման համար:		առկա
	ՆԱԽԱՊԵՍ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՌՈՒՍԻՖԻԿԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՒ ՍՔԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ		
2.51	Գրքի կողի ծալվածքների և պատկերների եռաչափ մշակում, սքանավորված փաստաթղթի եռաչափ մոդելի ստեղծում և բնօրինակ պատկերի հարթեցում ՝ ստացված եռաչափ մոդելի հիման վրա.		առկա
2.52	Օպերատորի մատնահետքերի և օպտիկական աղբի ավտոմատ հեռացում, ֆոնի վերացում		առկա
2.53	Սքանավորված բնօրինակի չափսերի ավտոմատ ամրագրում		առկա
2.54	Պատկերի եռաչափ մշակման համակարգ		առկա
2.55	Էջերի ավտոմատ ճանաչում		առկա
2.56	Դարձերեսի ավտոմատ բաժանում երկու էջի		առկա
2.57	Էջերի ոչ ավտոմատ ընտրություն և առանձնացում		առկա
2.58	Պատկերի շրջում պահանջվող չափով		առկա
2.59	Խտության փոփոխության հնարավորություն		առկա
2.60	Պատկերի պահպանություն միաժամանակ մի քանի ֆորմատներով		առկա
2.61	Պատկերների պահպանում միաժամանակ մի քանի ձևաչափով		առկա
2.62	Տպագրելու հնարավորություն		առկա
2.63	Ֆայլերի անունների ազատ կազմաձևում, ներառյալ առնվազն հինգ նիշ ունեցող ավտոմատ հաշվիչ, ներառյալ մետատվյալների օգտագործումը		առկա
2.64	Էջակալումը վերահսկելու հնարավորություն՝ բաց թողնված էջերի մասին տեղեկացնելու համար		առկա
2.65	Մետատվյալների ստեղծման հնարավորություն սքանավորման ընթացքում (ինչպես կառուցվածքային, այնպես էլ մատենագիտական)		առկա
2.66	Սքանավորման ընթացքում մետատվյալներ ստեղծելու հնարավորություն (ինչպես կառուցվածքային, այնպես էլ մատենագիտական)		առկա
2.67	Սքանավորված պատկերը առանձին պատուհանում կամ առանձին մոնիտորում ներկայացնելու ունակություն՝ տեսողական որակի վերահսկման համար		առկա
2.68	Ֆայլերը ավտոմատ վերանվանելու հնարավորություն՝ օգտագործված մետատվյալների միջոցով		առկա
2.69	Օրոցքի սքանավորվող մակերևույթի սահմանափակման գործառույթի առկայություն փոքր չափսերի բնօրինակները սքանավորելիս ժամանակ շահելու համար		առկա
2.70	Որակի ստուգման մոդուլը ավտոմատ ռեժիմում ինտեգրելու հնարավորություն		առկա
2.71	Տվյալների գոյություն ունեցող զանգվածի հետ աշխատելու, սքանավորված պատկերների հոսքային բեռնման և դրանց հետագա մշակման հնարավորություն		առկա

2.72	Ներկառուցված OCR՝ տեքստի ճանաչման համար (առնվազն 30 լեզուներ, ներառյալ ռուսերենը) և սքանավորվող պատկերի ճանաչում ապահովելու համար սքանավորելուց ֆայլը պահպանելուց հետո և երկշերտ PDF ֆայլի ստեղծում՝ հետագա որոնման համար:		առկա
2.73	Պատկերի մշակման ծրագրի լիցենզիայի ժամկետը՝ անժամկետ		անժամկետ երաշխիք
2.74	Տվյալների փոխանցման միջերես (ինտերֆեյս)		Gigabit Ethernet (1000 Mbit/վրկ)
2.75	Սքաների էներգասպառում	W	առնվազն 350
	ՍՔԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԱՅԻՆ / ԵԼՔԱՅԻՆ ԽՐՈՑՆԵՐԸ		
2.76	USB		առնվազն 1
2.77	Gigabit Ethernet		առնվազն 1
	ՍՔԱՆԵՐԻ ՈՒՂԵԿՑՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԵՆ:		
2.78	Տեխնիկական անձնագիր ռուսերեն		առկա
2.79	Սքաների օգտագործման ձեռնարկ ռուսերեն թղթե եւ օպտիկական կրիչներով		առկա
	ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՔՄԱՆ ՓԱԹԵԹԸ ՊԵՏՔ Է ՆԵՐԱՌԻ.		
2.80	Սքաներ		առկա
2.81	Սքաների օգտագործման ձեռնարկ՝ ռուսերեն՝ թղթի և օպտիկական կրիչների վրա:		առկա
2.82	CD-ներ՝ նախապես տեղադրված բոլոր ծրագրաշարերի ընթացիկ տարբերակներով		առկա
2.83	**Համակարգիչ** **Used Components:** Dell Precision Tower 5820, 950W Chassis, Intel Xeon W-2123 3.6GHz, 3.9GHz Turbo, 4C, 8.25M Cache, HT, (120W) DDR4-266, 16 GB (2x8GB) 2666MHz DDR4 RDIMM ECC, 2x 1TB 3.5inch Serial ATA (7,200 Rpm) Hard Drive, RAID 0, NVIDIA Quadra P600, 2GB, 4 mDP (5820T), Windows 10 Pro (64Bit) Englisch (MultiLanguageInterface) **1 հատ**		
2.84	**Մոնիտոր** Dell UltraSharp 32 Ultra HD 4K Monitor with PremierColor - UP3216Q **1 հատ**		
2.85	**UPS** - APC 950VA BX950UI**1 հատ**		

1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված լրակազմերը Գնորդին հանձնվում են ամբողջովին համալրված և կարգաբեկված:

ԳՆՈՐԴ

«Մատենադարան» ՄեսրոպՄաշտոցի Անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
ՀԷԲ Մյասնիկյանմ/ճ
Հ/Հ 163038100547
Տնօրեն_____
(ստորագրություն)
Վ. Տեր-Ղևոնդյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
ՀՀ 2500010488760100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01254973

Տնօրեն_____
(ստորագրություն)
Կ.Հարությունյան

Կ.Տ

Հավելված N 2
«28» դեկտեմբերի 2019 թ. կնքված
N ՄԱՏ-ԳՀԱՊՁԲ-05/19 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/հ	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30216110/1	սկաներներ համակարգիչների համար			24900000	24900000	24900000	24900000	24900000	24900000	24900000	24900000	24900000	24900000	**24900000**
2	30216110/2	սկաներներ համակարգիչների համար			34920000	34920000	34920000	34920000	34920000	34920000	34920000	34920000	34920000	34920000	**34920000**

ԳՆՈՐԴ

«Մատենադարան» ՄեսրոպՄաշտոցի Անվան հին ձեռագրերի գիտահետազետական ինստիտուտ» Հիմնադրամ
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
ՀՎՀՀ 01503576
ՀԷԲ Մյասնիկյանմ/ճ
Հ/Հ 163038100547

Տնօրեն_____
(ստորագրություն)
Վ. Տեր-Ղևոնդյան
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
ՀՀ 2500010488760100
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01254973

Տնօրեն_____
(ստորագրություն)
Կ.Հարությունյան
Կ.Տ